ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Կառույցը ստեղծվել է 2014 թվականին և լիազորված է իրականացնելու նախաքննություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ:

10

ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- Քննչական կոմիտեի կենտրոնական մարմին,
- Զինվորական քննչական գլխավոր վարչություն,
- Երևան քաղաքի քննչական վարչություն,
- Մարզային քննչական վարչություններ

ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներն են՝

- գլխավոր վարչությունները,
- վարչությունները,
- բաժինները,
- աջակցող մասնագիտական վարչությունները և բաժինները:

գլխավոր վարչությունների ենթաստորաբաժանումներն են գլխավոր վարչությունների վարչությունները

Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներն են՝

- վարչությունները,
- կայազորային քննչական բաժինները,
- աջակցող մասնագիտական բաժինները:

Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներն են՝

- քննչական վարչության բաժինները և աջակցող մասնագիտական բաժինը,
- վարչական շրջանների քննչական և աջակցող մասնագիտական բաժինները:

Մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումներն են՝

- մարզային քննչական վարչության տարածքային բաժինները և աջակցող մասնագիտական բաժինները:



ԿՈՄԻՏԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն
- Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն
- Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարարական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն
- Տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչություն
- Հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչություն
- Ներքին անվտանգության վարչություն
- Իրավաբանական վարչություն
- Միջազգային հարցումների ապահովման բաժին

ԿՈՄԻՏԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՋԱԿՑՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- Անձնակազմի կառավարման վարչություն
- Արտաքին կապերի, արարողակարգի և կազմակերպչական հարցերի վարչություն
- Ֆինանսական վարչություն
- հաշվապահական հաշվառման բաժին
- գնումների բաժին

- Առաջին բաժին
- Արխիվի բաժին
- Թարգմանությունների կազմակերպման բաժին
- Համակարգչային և տեխնիկական ապահովման բաժին
- Նյութատեխնիկական ապահովման բաժին
- Փաստաթղթաշրջանառության ապահովման բաժին
- Քաղաքացիների ընդունելության կազմակերպման և անցագրային բաժին
- Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության աջակցող բաժին
- Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության աջակցող բաժին
- Պետության, սահմանադրական կարգի հիմունքների եվ հասարարական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության աջակցող բաժին

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- Վերահսկողության վարչություն
- Հատկապես կարևոր գործերի քննության վարչություն
- Կայազորային վարչություն
- Երրորդ կայազորային քննչական բաժին (Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան)
- Չորրորդ կայազորային քննչական բաժին (քաղաք Երևան, Բաբայան 4)
- Հինգերորդ կայազորային քննչական բաժին (Գեղարքունիքի մարզ, քաղաք Սևան)
- Վեցերորդ կայազորային քննչական բաժին (Տավուշի մարզ, գյուղ Գետահովիտ)
- Յոթերորդ կայազորային քննչական բաժին (Լոռու մարզ, քաղաք Վանաձոր)
- Ութերորդ կայազորային քննչական բաժին (Վայոց ձորի մարզ, քաղաք Եղեգնաձոր)
- Իններորդ կայազորային քննչական բաժին (Սյունիքի մարզ, քաղաք Կապան)
- Տասներորդ կայազորային քննչական բաժին (Շիրակի մարզ, քաղաք Գյումրի)

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- Ծանր հանցագործությունների քննության բաժին
- Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին
- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժին
- Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին
- Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին
- Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին
- Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին
- Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին
- Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժին
- Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժին
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին
- Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին

ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- **Արագածոտնի մարզային քննչական վարչություն**
  - *Թալինի քննչական բաժին*
  - *Ապարանի քննչական բաժին*
- **Արարատի մարզային քննչական վարչություն**
  - *Մասիսի քննչական բաժին*
  - *Վեդիի քննչական բաժին*
- **Արմավիրի մարզային քննչական վարչություն**
  - *Վաղարշապատի քննչական բաժին*
- **Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն**
  - *Մարտունու քննչական բաժին*
  - *Սևանի քննչական բաժին*
  - *Վարդենիսի քննչական բաժին*
- **Լոռու մարզային քննչական վարչություն**
  - *Թումանյանի քննչական բաժին*
  - *Սպիտակի քննչական բաժին*
  - *Ստեփանավանի քննչական բաժին*

ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- **Կոտայքի մարզային քննչական վարչություն**
  - *Աբովյանի քննչական բաժին*
  - *Նաիրիի քննչական բաժին*
  - *Չարենցավանի քննչական բաժին*
- **Շիրակի մարզային քննչական վարչություն**
  - *Ախուրյանի քննչական բաժին*
  - *Արթիկի և Անիի քննչական բաժին*
- **Սյունիքի մարզային քննչական վարչություն**
  - *Գորիսի քննչական բաժին*
  - *Սիսիանի քննչական բաժին*
- **Վայոց ձորի մարզային քննչական վարչություն**
- **Տավուշի մարզային քննչական վարչություն**
  - *Բերդի քննչական բաժին*
  - *Դիլիջանի քննչական բաժին*
  - *Նոյեմբերյանի քննչական բաժին*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՐՁԱԲՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

2024թ. մայիսին ՀՀ ներքին գործերի նախարարության փորձաքրեագիտական վարչության հենքի վրա ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Քննչական կոմիտեի խորհրդանիշը

Խորհրդանիշի տարրերն են՝ երկու արծիվները, վահանը (երկու խաչաձևված աչքերի տեսքով), կնգումի (հայկական կզաքիսի) մորթին և կաղնու տերևները: Խորհրդանիշի ոսկեգույնով երիզված շրջանակաձև կենտրոնում երկու արծիվները պահում են խաչված աչքերի գծապատկերով ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի սպիտակ մորթիով:

Հաջորդ՝ արտաքին շրջանակաձև շերտում ոսկեգույն հայերեն տառերով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»: Ընդհանուր շրջանը երիզում է Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը:

Արծիվները ոսկեգույն են և խորհրդանշում են ուժ, սլացք, զգոնություն, կամք և սրատեսություն: Կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթին ընդգծված է սև գույնի պոչիկների պատկերներով, որը խորհրդանշում է արդարություն (արդարադատություն), անաղարտություն և ողջախոհություն՝ վկայելով կրողի բարոյականության, վեհության և անբասիրության մասին:

Խաչված աչքերի գծապատկերով ոսկեգույնով երիզված վահանը խորհրդանշում է ուշադրություն, ուշիմություն, անձի, հասարակության և պետության պաշտպանության ապահովում հանցագործություններից:

Սուրը ոսկեգույն է և խորհրդանշում է անկախություն, արդարություն և պայքար: Այն ուղղահայաց դիրքով գտնվում է վահանի հետնամասում: Վահանից դուրս՝ վերևի մասում երևում է սրի խաչաձև բռնակը, իսկ ներքևից դուրս է գալիս սրի շեղբը:

Միմյանց փոխկապակցված կաղնու երկու ոսկեգույն տերևները խորհրդանշում են անհողդողդ ուժ, տոկունություն, երկարակեցություն և վեհություն: Ոսկեգույնը խորհրդանշում է իմաստություն, արժանապատվություն, իշխանություն, իսկ մուգ կապույտը՝ զսպվածություն, ճշմարտություն, վճռականություն:

Խորհրդանիշի պատկերն ունի շրջանաձև տեսք: Շրջանը հավերժության և անսահմանության խորհրդանիշն է:

Քննչական կոմիտեի մեդալները և կրծքանշանները

«Պատվավոր քննիչ» կրծքանշան

«Հավատարմության համար» մեդալ

«Անձնվիրություն և անվեհերություն» մեդալ

«Վաստակի համար» մեդալ

«Անբասիր ծառայության համար» մեդալ

«Համագործակցության համար» մեդալ

«Լավագույն քննիչ» կրծքանշան

«Պատվավոր գործընկեր» կրծքանշան

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՍՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քննչական մարմինների անկախությունն ամրապնդելու, քրեական գործերով նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու և ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում գործող քննչական մարմինների հենքի վրա միասնական քննչական մարմին կազմավորելու նպատակով, Հայաստանի Հանրապետության նախագահի 2013թ. սեպտեմբերի 24-ի ՆԿ-159-Ա կարգադրությամբ, ստեղծվել է իրավական ապահովման հանձնաժողով:

Հանձնաժողովը մշակել և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ է ներկայացրել միասնական քննչական մարմնի կազմավորման և գործունեության համար անհրաժեշտ օրենքների նախագծերը:

2014թ. հունիսի 28-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքը. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության և ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության հենքի վրա, 2014թ. հոկտեմբերի 8-ին, կազմավորվել է ՀՀ քննչական կոմիտեն:

Այնուհետև, օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում, 2023թ. հունվարին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական գլխավոր վարչության հենքի վրա ՀՀ քննչական կոմիտեի կազմում ձևավորվել է Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունը, իսկ 2024թ. հունվարին՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի հենքի վրա ձևավորել է Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունը: 2024թ. մայիսին ՀՀ ներքին գործերի նախարարության փորձաքրեագիտական վարչության հենքի վրա ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2014-2024թթ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում քննվել է 335.079 քրեական վարույթ, որից 42.255 վարույթ՝ 52.690 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 102.414 վարույթ կարճվել է, 35.567 վարույթ միացվել: Քննված վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 57.688.310.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 3.200.869.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 4.445.782.000 ՀՀ դրամը:

Տասնամյա գործունեության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ծառայողներն արժանացել են 5.616 խրախուսանքի, իսկ 48 ծառայողներ՝ պետական պարգևների:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
Մամիկոնյանց 46/5